ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎՁՄ-ՄԱԾՁԲ-09/23

ք. Եղեգնաձոր «06» մարտի 2023թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա.Կարապետյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԱՁ Արման Սողոմոնյաը, ի դեմս տնօրեն Ա.Սողոմոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ներկայացուցչական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 292110 (երկու հարյուր իննսուներկու հազար հարյուր տաս / ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[4]

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[19] *Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:*

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[4] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	ԱՁ Արման Սողոմոնյան
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5	ՀՀ Վայոց ձորի մարզ Ք.Եղեգնաձոր
ՀՀ ֆին. Նախ. Գործառնական վարչ.	Միկոյանի8/1
ՀՎՀՀ 08907717	ՀՎՀՀ 83766151
Հ/Հ 900351051025	ՀՀ 220029675869000
ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի	Ագբա բանկ Եղեգնաձորի մասնաճյող
Գլխավոր քարտուղար	
----------Ա.Կարապետյան	Տնօրեն ----------Ա.Սողոմոնյան

Հավելված N 1

06.մարտի 2023թ. կնքված
ՎՁՄ-ՄԱԾՁԲ-09/23 ծածկագրով

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը **
1	79111200/1	Ներկայացուցչական ծառայություններ	1	292110	1	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Շոկոլադապատ կոնֆետներ Ըստ սահմանված բնութագրի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդօրենքի 8-րդ հոդվածի/ 1կգ-4000դ/	կգ	28500	5	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Սև թեյ Բայխա թեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր:Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորվածեն 2, 2,5և 3 գփաթեթներով: "Փունջ", բարձրորակ և ITեսակների, ԳOUS 1937-90 կամԳOUS1938-90:Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկմակնշումը՝ "Սննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-րդհոդվածի/1տուփը600դր/	տուփ	12000	20	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Մուրաբա պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակասքան 80 %: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքիանվտանգությանմա	կգ	6800	4	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023

		սին” ՀՀօրենքի 8-րդհոդված/1կգ-1500դր/					
		Բնական մեղր՝ ծաղկային կամ մեղրացողային, առանց մեխանիկական խառնուրդների և խմորման, ջրիզանգվածայինբաժինը՝ 18,5 %-ից ոչավելի, սախարոզիզանգվածայինմասը (ըստբացարձակչորնյութի)՝ 5,5%-ից ոչավելի, ՀՍՏ 228-2003, փաթեթավորումը՝ ՀՍՏ 228-2003:Անվտանգությունընևմակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվներին “Մանդամթերքիանվտանգությանմասին” ՀՀօրենքի 8-րդհոդվածի:Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 %/1կգ4000դր/	կգ	10000	2	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Ապակյա շշով, 0,5լ Խմելու աղբյուրի ջուր, լրացուցիչմաքրմանփուլանցած, շշալցված 0,5լտարողությամբապակյաշշերով՝ըստ “Մանդամթերքիանվտանգությանմասին” ՀՀօրենքի 8-րդհոդվածի/1շիշը175դր/	շիշ	13300	70	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Պոլիէթիլենային տարայով, 0,5լ Խմելու աղբյուրի ջուր, լրացուցիչ մաքրման փուլ անցած, շշալցվածտարողությամբպոլիմերայինշշերում:Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների, իսկմակնշումը՝ “Մանդամթերքիանվտանգությանմասին” ՀՀօրենքի 8-րդհոդվածի:/1շիշը125դր/	շիշ	10400	80	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Ապակյաշշով, 0,5լ Հանքայինջուր30/62 (հանքայնացումը 3,9-4,8 գ/դմ3) կամ 2/61 62 (հանքայնացումը 4,0-4,7 գ/դմ3), կամ 1/00 (հանքայնացումը 4,2-5,2 գ/դմ3), կամ 1/2001 (հանքայնացումը 3,2-4,7 գ/դմ3) հորատանցքից, փաթեթավորումը՝ շշալցված 0,5 դմ3 տարողությամբ ապակյա շշերում, ՀՍՏ 191-2000: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. ապրիլի 30-ի N 491-Ն որոշմամբ հաստատված “Շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”,	շիշ	19000	100	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023

		“Սննդամթերքի անվտանգության/1շիշը175դր/					
		Հանքայինջուրպոլիէթիլենայինտարայով 0,5լ30/62 (հանքայնացումը 3,9-4,8 գ/դմ3) կամ 2/61 62 (հանքայնացումը 4,0-4,7 գ/դմ3), կամ 1/00 (հանքայնացումը 4,2-5,2 գ/դմ3), կամ 1/2001 (հանքայնացումը 3,2-4,7 գ/դմ3) հորատանցքից, փաթեթավորումը՝ շշալցվածտարողությամբպոլիմերայիննյութերիցպատրաստվածշշերում, ՀՍՏ 191-2000:Անվտանգությունըևմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2009 թ. ապրիլի 30-ինN 491-Նորոշմամբհաստատված “Շշալցվածհանքայինջրերիններկայացվողպահանջներիտեխնիկականկանոնակարգի”, “Սննդամթերքիանվտանգության/1շիշը150դր/	շիշ	16000	100	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Մրգահյութեր՝ պատրաստվածթարմմրգերիցևպտուղներից, պտղամսով, շաքարիօշարակիհավելումովկամառանցդրա, արտաքինտեսքովպարզ՝ նստվածքիզանգվածայինմասը 0,2% ոչավելիևոչպարզ՝ 0,8% ոչպակաս, ԳՕՍՏՌ 52184-2003, ԳՕՍՏՌ 52185-2003 կամԳՕՍՏՌ 52186-2003:Անվտանգությունըևմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2009 թ. հունիսի 26-իթիվ 744-Նորոշմամբհաստատված “Հյութերիննհյութամթերքներիններկայացվողպահանջներիտեխնիկականկանոնակարգի”, “Սննդամթերքիանվտանգությանմասին” ՀՀօրենքի 8-րդհոդվածի/1տուփը500դր/	տուփ	9000	18	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Լիմոնադ Անվտանգությունը և մակնշումը՝ ըստՀՀկառավարության 2009 թ. հունիսի 26-իթիվ 744-Նորոշմամբհաստատված “Հյութերիննհյութամթերքներիններկայացվողպահանջներիտեխնիկականկանոնակարգի”, “Սննդամթերքիանվտանգությանմասին” ՀՀօրենքի 8-րդհոդվա/1շիշը150դր/	շիշ	6660	37	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Պեպսիկոլա Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-իթիվ 744-Նորոշմամբհաստատված “Հյութերիննհյութամթերքներիններ	շիշ	4500	9	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023

		կայացվողպահանջներիտեխնիկակ անկանոնակարգի”, “Սննդամթերքիանվտանգությանմա սին” ՀՀօրենքի 8-րդհոդվածի//1շիշը450դր/					
		Միրինդա Անվտանգությունը և մակնշումը՝ ըստՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-իթիվ 744-Ն որոշմամբ հաստատված “Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”, “Սննդամթերքիանվտանգությանմա սին” ՀՀօրենքի 8-րդհոդված/1շիշը450դր/	շիշ	5500	11	Ք.Եղեգնաձո ր Շահումյան 5	25.12.2023
		Միջին չափսի խնձոր թարմ, պտղաբանական Iխմբի, Հայաստանիտարբերտեսակների, նեղտրամագիծը 5 սմ-իցոչպակաս, ԳOUS 21122-75, անվտանգությունընևմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-իN 1913-Նորոշմամբհաստատված “Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոն ակարգի”և “Սննդամթերքիանվտանգությանմա սին” ՀՀօրենքի/1կգ400դր/	կգ	7200	18	Ք.Եղեգնաձո ր Շահումյան 5	25.12.2023
		Նարինջ թարմ, պտղաբանականIIխմբի (71-իցփոքրմինչև 63մմներառյալ), ԳOUS 4427-82:Անվտանգությունընևմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-իN 1913-Նորոշմամբհաստատված “Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոն ակարգի” և “Սննդամթերքիանվտանգությանմա սին” ՀՀօրենքի 8-րդհոդվածի:/1կգ550դր/	կգ	11000	20	Ք.Եղեգնաձո ր Շահումյան 5	25.12.2023
		Մանդարին թարմ, Iպտղաբանականխմբի, դեղինկեղևովևպտղամսով, ԳOUS 4428-82, անվտանգությունը, փաթեթավորումընևմակնշումը՝ ըստՀՀկառ. 2006թ. դեկտեմբերի 21-իN 1913-Նորոշմամբհաստատված “Թարմպտուղ-բանջարեղենիտեխ. կանոնակարգի”և “Սննդամթերքիանվտանգությանմա սին” ՀՀօրենքի 8-րդհոդվածի/1կգ500դր/	կգ	10000	20	Ք.Եղեգնաձո ր Շահումյան 5	25.12.2023

		Բանան թարմ, պտղաբանականIIխմբի (71-հցփոքրմինչև 63 մմներառյալ), ԳOUS 4427-82:Անվտանգությունընևմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ինN 1913-Նորոշմամբհաստատված "Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի" և "Սննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-րդհոդվածի/1կգ600դր/	կգ	7000	10	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Խաղող սեղանի տարբեր սորտերի Անվտանգությունընևմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ինN 1913-Նորոշմամբհաստատված "Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի" և "Սննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-րդհոդվածի/1կգ500դր/	կգ	11000	22	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Հրուշակեղեն Տեղական արտադրության Անվտանգությունընևմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ինN 1913-Նորոշմամբհաստատված "Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի" և "Սննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-րդհոդվածի/1կգ2500դր/	կգ	13000	5	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Պնդուկ Անվտանգությունը և մակնշումը՝ ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ինN 1913-Նորոշմամբհաստատված "Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի" և "Սննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-րդհոդվածի/1կգ5000դր/	կգ	15000	3	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Նուշ Անվտանգությունընևմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ինN 1913-Նորոշմամբհաստատված "Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի" և "Սննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-րդհոդվածի/1կգ6000դր/	կգ	18000	3	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023

		Գետնանուշ Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմպտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի/1կգ1200դր/	կգ	6250	5	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Ընկույզի միջուկ Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմպտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի/1կգ4000դր/	կգ	30000	5	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		Բնական լուծվող սուրճ, չորացրած փոշու վիճակում, բնականբովածսուրճիխտածո, նախատեսվածտաքևսառըըմպելիքպատրաստելուհամար, խոնավությանզանգվածայինմասը՝ թողարկմանժամանակ՝ 4,0 %-ից ոչ ավելի, պահմանժամկետիընթացքում՝ 6,0 %-ից ոչ ավելի, կոֆեինիզանգվածայինմասը՝ 2,3 % -ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 4,7 pH-ից ոչ պակաս, ԳOUS 29148-97: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների, իսկմակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի/1կգ10000դր/	կգ	10000	1	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023
		սուրճ աղացած Բնական բոված, դարչնագույն փոշի, հատիկների կեղևի ներառումով, համը դուրեկան, տարբեր երանգներով (թթու, դառը, տտիպ և այլն), բույրը նուրբ և վառ արտահայտված առանց կողմնակի համի և հոտի, խոնավության զանգվածային մասը՝ թողարկմանամանակ՝ 4 %-ից ոչ ավելի, պահման ժամկետի ընթացքում՝ 7%-ից ոչ ավելի: Կոֆեինի զանգվածային մասը հատիկավոր և աղացած	կգ	12000	4	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	25.12.2023

		սուրճում՝ 0,7%-ից ոչ պակաս, աղացվածքի մեծությունը՝ N 095 մաղով անցնող սուրճ 98,5%-ից ոչ պակաս «թուրքական» սուրճի համար և 90,0 %-ից ոչ պակաս մնացած սուրճերի համար: Կողմնակի խառնուկների ներկայություն չի թույլատրվում:Անվտանգությունը՝ ըստ 2-III- 4.9-01-2 010 հիգիենիկնորմատիվների, «Մանդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի 8-րդհոդվածի/1կգ3000դր/					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀ ֆին. Նախ. Գործառնական վարչ.
ՀՎՀՀ 08907717
Հ/Հ 900351051025
ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
Գլխավոր քարտուղար
----------Ա.Կարապետյան

ԿԱՏԱՐՈՂ
ԱՁ Արման Սողոմոնյան
ՀՀ Վայոց ձորի մարզ Ք.Եղեգնաձոր
Միկոյանի8/1
ՀՎՀՀ 83766151
ՀՀ 220029675869000
Ագբա բանկ Եղեգնաձորի մասնաճյող
Տնօրեն ----------Ա.Սողոմոնյան

Հավելված N 2
«06» մարտի 2023թ. կնքված
ՎՁՄ-ՄԱԾՁԲ-09/23 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Չափաբաժնի համար	ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120/1	Ներկայացուցչական ծառայություններ			58422	131449	131449	131449	204477	204477	204477	292110	292110	292110	292110

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:
** Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀ ֆին. Նախ. Գործառնական վարչ.
ՀՎՀՀ 08907717
Հ/Հ 900351051025
ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
Գլխավոր քարտուղար
----------Ա.Կարապետյան

ԿԱՏԱՐՈՂ
ԱՁ Արման Սողոմոնյան
ՀՀ Վայոց ձորի մարզ Ք.Եղեգնաձոր
Միկոյանի8/1
ՀՎՀՀ 83766151
ՀՀ 220029675869000
Ագբա բանկ Եղեգնաձորի մասնաճյող
Տնօրեն ----------Ա.Սողոմոնյան

Հավելված 3-
«06» մարտ 2023թ. կնքված
ՎՁՄ-ՄԱԾՁԲ-09/23 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«06» մարտի 2023թ. կնքված
ՎՁՄ-ՄԱԾՁԲ-09/23 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն